

ՊԱՏՄԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԼԵԶԱՈՐԾԱԿԱՆ
ԱՐՏԱՅԱՅՏՉԱՄԻՋՈՑՆԵՐԸ
ՊԵՐՏ ԶԵՅԹՈՒՆՑՅԱՆԻ «ԱՍՏԾՈ ՏԱՍՆԵՐԿՈՒ ՕՐԸ» ԵՎ
«ԱՎԵՐԿԱԾ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՄՊԵԼԸ» ԴՐԱՄԱՆԵՐՈՒՄ

Արդի հայ արձակի և դրամատուրգիայի ամենահին քննադատի պիեթեներից մեկի՝ Պերտ Զեյթունցյանի ստեղծագործություններին շատերն են անդրադարձել, արտահայտվել են հաճախ տրամագծորեն հակառակ կարծիքներ:

Այս հոդվածում նպատակ չենք հետապնդում վիճարկել այդ կարծիքները, պարզապես բերենք մի հատված Ս.Արզումանյանի՝ Զեյթունցյանի արվեստին տրված գնահատականից, որն առավել գիտական ու դիպուկ է թվում մեզ: «Պերտ Զեյթունցյանը մեկն է 60-ականների գրական սերնդի այն անհատականություններից, ովքեր հայրենական արդի գրականությունը բերեցին «ինտելեկտուալ արձակ», գեղարվեստական մտածողության լայնարձակ տեսադաշտ, ձևական ու կառուցվածքային մի շարք հատկանիշներով հայ ժամանակակից վիպասանությունը մերձեցրին եվրոպականին:

Բնավորությունների հոգեբանական-մերժամանակյա կառույցը, պատմության ճշմարտությունը, վերլուծական-համադրական արձակի այն տիպը, որն ամենից առաջ պարտադրում է իրականության փիլիսոփայական իմաստավորում, սրանք այն գծերն են, որոնք բնութագրական են Պ. Զեյթունցյանին և լավագույնս արտահայտվել են նրա արձակում և դրամատուրգիայում»¹:

Ինքնատիպ է նաև Զեյթունցյանի ստեղծագործությունների լեզուն: Եվ այդ ինքնատիպությունը պայմանավորված է ոչ միայն հեղինակի լեզվամտածողությամբ, այլև երկերի թեմատիկ բազմազանությամբ: Նրա՝ հատկապես պատմական թեմաներով զրված երկերն ունեն հարուստ բառաշերտ, խոսքի ձևաբանական ու շարահյուսական ոճավորման ամենատարբեր դրսևորումներ, համեմատությունների, այլաբանությունների, անձնավորման և այլ արտահայտչամիջոցների բազմաթիվ կիրառություններ: Բերենք մի քանի օրինակ «Աստծո

¹ Ս. Արզումանյան, Մեկը՝ քչերից, «Գրական թերթ», 03.02.1989թ.

տասներկու օրը» դրամայից, որում նկարագրված պատմական անցքերը տեղի են ունեցել մ.թ.ա. 94-95 թվականներին: Դարաշրջանի շունչը քսաներորդ դարի ընթերցողին հասցնելու համար Պերճ Զեյթունցյանը ոչ միայն օգտագործում է բազմաթիվ հնաքանություններ, որոնց կանդրադառնալու ավելի ուշ, այլև հմտորեն կիրառում է բառային փոխակերպումներ, նախադասությունների ծարտասանական տարբեր ձևեր ու ռեական այլ հնարանքներ:

Այս դրամայի վերնագիրն իսկ պատմականությունն ստեղծելու յուրօրինակ հնարանք է: Օգտագործված երեք բառերից (վստված, տասներկու, օր) ոչ մեկը հնաքանություն չէ: Ժամանակակից հայոց լեզվի շարադասության տեսակետից ևս որևէ անբնական ռեակորում չկա. սովորական անվանական բառակապակցություն է, որտեղ օրինաչափորեն օրը լրացյալին նախորդում է որոշիչը, իսկ որոշիչից առաջ դրված է հատկացուցիչը: Ձևաբանական առումով մույնպես անհարթություն չկա: Հայտնի է, որ ուղղական հոլովով թվականի (տասներկու) հիմնական պաշտոնը որոշիչն է, իսկ սեռական հոլովով գոյականինը (վստծու)՝ հատկացուցիչը: Թերևս փոքր-ինչ հնացած է թվում վստծո ձևը, որովհետև ժամանակակից գրական հայերենում գրաբարյան ու հոլովումը չի պահպանված: Բայց որոշ բառերի սեռականը կազմելիս գործ ունենք զուգաձևությունների հետ՝ սեր-սիրո կամ սիրու, վստված՝ վստծո կամ վստծու: Ցանկության դեպքում պատմականության երանգ կարելի է որոնել տասներկու թվականի մեջ: Թեև դրամայում պատկերված են հեթանոսական շրջանի անցքերը, բայց տասներկու թիվը՝ որպես աստվածաշնչում հաճախակի հանդիպող խորհրդանշական թիվ (Հիսուսն ուներ տասներկու առաքյալներ, վստծո ստեղծած Երուսաղեմ քաղաքը՝ տասներկու դարպաս, տասներկու դուռ, դռների վրա քանդակված էին տասներկու հրեշտակ, պարիսպների վրա՝ տասներկու թանկարժեք քարերի տեսակ և այլն), ինչ-որ չափով ընթերցողին տանում է դեպի հեռավոր ու միստիկ անցյալ... Սեր կարծիքով, սակայն, եթե Զեյթունցյանը մույն բառակապակցության մեջ տասներկուսի փոխարեն օգտագործեր ուրիշ մի թիվ, միևնույն է, այն դարձյալ պատմականության երանգ կունենար, որովհետև այս վերնագրում ինչ-որ խորհրդավոր, առեղծվածային մի բան կա, որ բնորոշ չէ ժամանակակից ընթերցողի լեզվամտածողությանը:

Նույնը կարելի է ասել «Ավերված քաղաքի առասպելը» դրամայի վերնագրի մասին: Միայն առասպել բառը արդեն հուշում է, որ գործ ունենք վաղուց կատարված, պատմություն ու առասպել դարձած իրողությունների հետ:

Պատմականություն ստեղծելու նպատակով Ձեթունցյանը վարպետորեն օգտագործում է գեղարվեստական գրականության տարբեր արտահայտչաձևեր: Նրա երկերում հաջողված են հատկապես փոխաբերական պատկերները, որոնց մեջ միաժամանակ առկա են համեմատության, չափազանցության, շնչավորման ու անձնավորման ինքնատիպ կիրառումներ: Այս հնարանքների միջոցով ստեղծված պատկերներում ևս հիմնականում օգտագործվում են արդի հայերենում լայն գործածություն ունեցող բառեր, բայց այնպիսի բառեր, որոնք անվանում են հին ժամանակներում օգտագործված իրեր (սուր, պատյան, նետ, ճրագ) և հասկացություններ (պատերազմ, հաշտություն, դաշինք, դավ, դավաճանություն և այլն):

«Միհրդատ —Իմ սուրը եռում է պատյանի մեջ: Անհամբերությունից հայիոյում է իր տիրոջը»:²

Արքա - Ուրեմն համարիր, որ իմ սուրը արյունակից է նրան»:³

Եթե մեջբերված առաջին նախադասությունը պարզապես փոխաբերություն է, ապա երկրորդը նաև իր ցույց տվող գոյականի անձնավորմամբ ստեղծված այլաբանական պատկեր-գործողություն է, որոնք ոչ միայն գրավչություն են տալիս խոսքին, այլև ընթերցողին տանում են դեպի պատմական անցյալը, քանզի այդպիսի երկխոսություն կարող է լինել միայն հեռավոր, ասպետական ժամանակներում ապրած հերոսների միջև:

Բերենք պատկերավոր խոսքի ևս մեկ օրինակ, որտեղ անձնավորված է ոչ թե թանձրացական, այլ վերացական գոյականը: Երևույթ, որը համեմատաբար քիչ է հանդիպում գրականության մեջ, և որի դիպուկ կիրառումը մեծ վարպետություն է պահանջում արվեստագետից:

«Թագուհի-Միհրդատի համար ես կսգամ և կողբամ ուշ գիշերներին,

² Պ. Ձեթունցյան, Ամենատխուր մարդը, Ե. 1981թ., էջ 103:

³ Նույն տեղում, էջ 103:

երբ մենակությունն ավելի է լկտիանում և սողոսկում իմ փետրալի ու ոսկեթել մահիճը»:⁴

Այս դեպքում էլ հատուկ ընտրված հնաբանություններ չկան: Որոշ չափով հնաբանության երանգ ունի մահիճ բառը, որի անկողին հոմանիշը առավել գործածական է արդի հայերենում: Սակայն մահիճ բառին տրված ոսկեթել որոշիչը արդեն պատմականության մթնոլորտ է ստեղծում ընթերցողին ու հանդիսատեսին հիշեցնելով, որ հնում արքայական, իշխանական դասերին պատկանողները ի թիվս այս պերճանքների ունեցել են նաև ոսկե թելերով հյուսված կամ կարված զգեստներ և անկողին:

Ձեյթունցյանի պատմական երկերում նմանօրինակ հատվածներ շատ կան, ուր ստեղծագործությանը պատմականության շունչ հաղորդող հաջողված տողերում չկան հնաբանություններ: Սակայն առավել շատ են այն դրվագները, որոնցում պատմական դարաշրջանի տիպականացման համար կիրառված են բազմաթիվ հնաբանություններ:

Նախքան Ձեյթունցյանի կողմից օգտագործված հնաբանությունների տեսակներին անդրադառնալը հիշենք, որ հնաբանությունները բաժանվում են երկու խմբի՝ բուն հնաբանություններ կամ պատմաբառեր և հնացած բառեր կամ հնաբառեր: Հայտնի է, որ պատմաբառերը ժամանակի ընթացքում արտալեզվական գործոնների ազդեցությամբ գործածությունից դուրս եկած բառեր են, որոնք օգտագործվում են պատմագիտական ուսումնասիրություններ և պատմական թեմաներով գեղարվեստական երկեր գրելիս:

Դրանք զուտ անվանողական, ճանաչողական արժեք ունեցող բառեր են, որոնք ցույց են տալիս լեզվի զարգացման անցյալ փուլերին բնորոշ գործիքներ, զգեստներ, հավատալիքների պարագաներ, տիտղոսներ, պաշտոններ, տվյալ դարաշրջանի քաղաքական ու տնտեսական հարաբերություններ և այլն: Օրինակ՝ սպարապետ, սեպուհ, մարզպան, մարզպետ, նախարար, ներքինի, սենեկապետ, նվիրակ, նետ, աշտե, նիզակ, թագաժառանգ, կանանոց, գահ, գահավորակ և այլն: Պատմաբառերը պատկանում են լեզվի սահմանափակ կիրառություն ունեցող բառաշերտին և ունեն քարացած տերմինների արժեք:

⁴ Նույն տեղում, էջ 140:

Սակայն հասարակական-քաղաքական մեծ տեղաշարժերի դեպքում չեն բացառվում որոշ պատմաբառերի՝ լեզվի պասիվ բառաշերտից դեպի ակտիվ բառաշերտ տեղափոխվելը: Օրինակ, վերջին տասնամյակում՝ հայկական ինքնուրույն պետականության վերականգնումից հետո, դարձյալ ակտիվ կիրառություն ստացան նախարար, մարզպետ, գյուղապետ, ոստիկան և այլ պատմաբառեր, որոնցով անվանում են իրենց նախկին իմաստներին մոտ կամ այլ պաշտոններ: Այս բառերի նոր իմաստներով վերագործածությունից էլ ծնունդ առան նաև նրանցով կազմված նորաբանությունները՝ թաղապետարան, մարզպետարան, գյուղապետարան, փոխմարզպետ, փոխնախարար և այլն: Նշանակում է՝ պատմաբառերը ոչ միայն լեզվի պասիվ բառաշերտում «ննջող», քարացած բառեր են, այլև հարկ եղած դեպքում կարող են «թարմանալ» և հարուստ բառամթերք հանդիսանալ նույնիսկ նորաբանությունների ստեղծման համար:

Եթե գիտական ուսումնասիրություններում պատմաբառերը իրոք քարացած տերմինների արժեք ունեն, ապա պատմագեղարվեստական երկերում դրանց կիրառումը նաև տվյալ դարաշրջանի շուռնչ ու ոգին պատկերելու միջոց է: Ընդ որում, գեղարվեստական երկերում էլ կա պատմական բառերի գործածության երկու դեպք՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ: Օբյեկտիվ կիրառություն ասելով՝ նկատի ունենք այն բառերի գործածությունը, որոնցից տվյալ դարաշրջանի մասին գրելիս հեղինակը չի կարող արհեստականորեն խուսափել: Նյութը մեջբերումներով չծանրաբեռնելու նպատակով նշենք միայն, որ Զեթունցյանի պատմական դրամաներում բազմիցս օգտագործված արքա, քրմապետ, կայսր, պալատական, գահ, ճորտ, իշխան, Ուտիք, Աշտիշատ, և այլ պատմաբառեր օգտագործված են նյութից բխող օբյեկտիվ անհրաժեշտությամբ:

Սինչդեռ վիշապաքաղ, բոցամորուս (Վահագն), ոսկեմայր, ոսկեծին (Անահիտ), վարդամատ, ոսկեծղի (Աստղիկ), գահնամակ, արյունապարտ, գահասրահ, ազատանի, քղամիդ, խույր, Ահրիման, բղեշխ, մուսետիկ, վարծակ, պրեֆեկտ, մազդեզանց, վանքապատկան և այլ պատմաբառերի զգալի մասի օգտագործումից ցանկության դեպքում կարելի էր և խուսափել: Բայց հեղինակը դրանք միտումնավոր գործածել է, որպեսզի պատմականության մթնո-

լորտ ստեղծի: Ուրեմն այս պատմաբառերի գործածումները զուտ հեղինակային, այսինքն սուբյեկտիվ բնույթ ունեն:

Եթե առաջին շարքում թվարկած պատմաբառերը խոսքի ոճավորման մեջ դեր չեն կատարում, ապա վերջինների դեպքում նույնը պնդել չենք կարող: Այսպես, Վահագն աստծու մասին կարելի է խոսել նաև առանց վիշապաքաղ և քոցամորուս մակդիրների, բայց հենց այս մակդիրներն են, որ հմայք, վեհություն, հզորություն են հաղորդում դիցաբանական այս կերպարին, որին, ինչպես նաև աստվածների հայր Արամազդին կամ ոսկեծղի վարդամատ Աստղիկին, ոսկեմայր, ոսկեծին Ամահիտին, ժողովրդի կողմից նման մակդիրներ տալը ինքնանպատակ չի եղել: Հայտնի է, որ հնում դարաշրջանի բարոյական հոգեբանության լավագույն խտացումները ժողովուրդը վերագրել է դիցաբանական ու բանահյուսական սիրված հերոսներին: Այսինքն այդ մակդիրները ինչ-որ չափով նաև հայ ժողովրդի բարոյականության ու հոգեբանության հավաքական բնութագիրն են, և այդ պատմաբառերի բացակայության դեպքում նշված դիցաբանական հերոսների կերպարների ինքնատիպությունը էապես կտուժեր:

Այնուամենայնիվ աներկբա է, որ պատմագեղարվեստական ստեղծագործությունների մեջ հեղինակի լեզվամտածողության հարստությունը զգալիորեն պայմանավորված է հատկապես հմաբառերի նպատակային գործածությամբ:

Եթե պատմաբառերի մեծ մասը, ինչպես նկատեցինք, զուրկ են ոճական արժեքից, օգտագործվում են օբյեկտիվ անհրաժեշտությամբ, քանի որ դրանք արտալեզվական զարգացումների արդյունքում են վերածվել հմաբանությունների և այլ բառերով փոխարինվել չեն կարող, ապա հմաբառերը, որոնք առաջանում են ներլեզվական զարգացումների հետևանքով (ինչյունային, ձևաբանական, բառային, բառակազմական և իմաստաբանական), գործածվում են միայն ու միայն հեղինակի սուբյեկտիվ ընտրությամբ: Ի տարբերություն պատմաբառերի՝ հաճախ հենց հմաբառերի հմուտ գործածություններից է կախված ոչ միայն նկարագրվող պատմական դարաշրջանի, այլև պատմագեղարվեստական կերպարի տիպականացման հաջողվածությունը:

Մեր դիտարկումները ցույց են տալիս, որ Պերճ Զեյթունցյանի դրամաներում գործածված հնաբառերի մեծ մասը բառային է, այսինքն օգտագործված են հնացած բառեր, որոնց .հոմանիշները կան ժամանակակից հայոց լեզվի ակտիվ բառաշերտում (օրհաս, սուղ, ճողոպրել, կառափ, այպանել, արյունապարտ, անութ, խորշակ, նզովել և այլն):

«Արքա - Գլուխս է ձեզ այպանում, անիծում, իսկ սիրտս ուրիշ բան է ինձ ասում...»⁵

Արշակ - Ես հրավիրում եմ գողերին, ավազակներին, արյունապարտներին, մարդասպաններին, զանձագողերին, խաբեբաներին:⁶

Արքա - Ցավ չպատճառեք... Անութներից բռնեք, անութներից...⁷

Արքա - Գիտեի, որ խորշակը չէր կարող իմ կյանքից ամեն ինչ տարած լինել, զոհն մի սառնորակ աղբյուր պիտի մնար մի օազիս անջրդի անապատում»⁸:

Բառային հնաբառերից հետո Զեյթունցյանի դրամաներում համեմատաբար մեծ տեղ են զբաղում հնչյունային, ձևաբանական և իմաստաբանական հնաբառերը, այսինքն այն բառերը, որոնք հետագայում հնչյունական կազմի, ձևաբանական կառուցվածքի կամ իմաստային փոփոխություններ են կրել:

«Արքա - ... եղել են միայն կարոտներ ու ձգտում, բախտից խռովումներ ու դժգոհանքներ...»⁹:

Արշակ -- Եվ դեռ համարձակվում ես հրաժարումդ ի ցույց դնել բոլորին:¹⁰
Մարգարետ -- Ի վերուստ սահմանված կարգ է, իշխան:¹¹

Դրաստամատ -- Գիտեմ, որ կարող ես ատել ինձ, բայց ես պարտ եմ հայտնել այն, ինչ լսել եմ:¹²

⁵ Նույն տեղում, էջ 123:

⁶ Նույն տեղում, էջ 167:

⁷ Նույն տեղում, էջ 102:

⁸ Նույն տեղում, էջ 113:

⁹ Նույն տեղում, էջ 146:

¹⁰ Նույն տեղում, էջ 157:

¹¹ Նույն տեղում, էջ 169:

¹² Նույն տեղում, էջ 185:

Առաջին երեք օրինակներում գործ ունենք ձևաբանական հնաբանությունների հետ: Դժգոհանք-ի համարժեքը արդի հայերենում դժգոհություն բառն է, ի վերուստ_բառն օգտագործվում է առանց ի նախդիրի: Հրաժարում(դ) բառի համարժեքը հրաժարական(դ) կամ հրաժարվել(դ) բառերն են: Մինչդեռ պարտ (եմ) բառը և՛ հնչյունային, և՛ ձևաբանական, և՛ իմաստաբանական փոփոխությունների արդյունքում առաջացած հնաբառ է: Հնչյունային է այնքանով, որքան որ նրա արդի հոմանիշները առաջացել են հնչյունի կամ հնչյունների հավելումով՝ պարտ+ք, պարտ+ավոր, պարտ+ական: Օրինակներ՝ Ես նրան պարտք եմ հազար դրամ: Կյանքովս պարտական եմ նրան: Ես պարտավոր եմ նրան ընդառաջել:

Քանի որ ք-ն գրաբարայան հոգնակիակերտ վերջածանց է, իսկ ական-ը և ավոր-ը ածանցներ են, ուրեմն գործ ունենք մաս ձևաբանական փոփոխումով առաջացած հնաբանությունների հետ: Սակայն պարտ բառը մաս իմաստաբանական հնաբառ է, որովհետև՝

1. Այս բառը գրաբարում արտահայտել է մի քանի իմաստ, մինչդեռ ինչպես նկատեցինք ներկայիս հոմանիշներից յուրաքանչյուրը (պարտք, պարտավոր, պարտական) այդ իմաստներից միայն մեկն է կրում:

2. Պարտ_ բառի հոմանիշներից մեկը՝ պարտք-ը, ոչ թե ք հնչյունի մեխանիկական հավելումից առաջացած նոր բառ է, այլ պարզապես պարտ բառի գրաբարյան հոնգակին է: Ուրեմն գործ ունենք մաս բառիմաստի նեղացման երևույթի հետ (պարտ= պարտք, իսկ պարտք=պարտքեր):

Իմաստաբանական հնաբառի գործածության հաջողված օրինակ է հետևյալ նախադասությունը՝

«Արքա - Ես այսօր մորթել կտամ մի ցուլ, մաքրել կտամ փորոտիքը և նրա գործարանների դիրքով ես ու դու կորոշենք մեր ճակատագիրը»:¹³

Այստեղ հեղինակը պատմական մթնոլորտ է ստեղծում ոչ միայն հեթանոսական հավատալիքների ու ծեսերի հիշատակմամբ, այլև գործարան իմաստաբանական հնաբառի հաջող գործածությամբ:

¹³ Նույն տեղում, էջ 90:

Հայտնի է, որ գործարան բառը հնում ունեցել է մարմնի մաս, օրգան իմաստը:¹⁴

Վերջապես Ձեթունցյանի դրամատուրգիայի խոսքաշերտերում առատորեն գործածված են նաև դարձվածային հնաբանություններ՝ ի ցույց դնել, միտքը չէր զորի, երիցս անհիծյալ, տեր ընդ քեզ, ոտաց ճանապարհի և այլն:

«Արշակ -- եթե ուզում ես մեկին երիցս անհիծել, թող փոքր ազգի թագավոր դառնա»:¹⁵

Ամփոփելով նշենք, որ չնայած վերոհիշյալ և այլ բազմաթիվ հնաբանությունների գործածություններին, որոնցով Պերճ Ձեթունցյանին իրոք հաջողվել է ստեղծել նկարագրվող պատմական դարաշրջանի տիպական մթնոլորտը, այնուամենայնիվ, նրա ստեղծագործությունների լեզուն ծանրաբեռնված չէ այդ բառերի անհարկի կուտակումներով:

Նրա երկերի լեզուն ճկուն է և աչքի է ընկնում ժամանակակից հայոց լեզվի բառապաշարի, նրա քերականական և ոճական բազմազան դրսևորումների կիրառման հաջողվածությամբ ու ինքնատիպությամբ:

¹⁴ Աղայան Էդ. Հայերենի բացատրական բառարան, Ե. 1967:

¹⁵ Նույն տեղում: էջ 161: